Ի՞ՆՉ Է GOOGLE JAMBOARD-Ը



Google Jamboard-ը թվային գրատախտակ է, որի օգնությամբ կարելի է մի շարք գործողություններ կատարել: Այն կարող է օգնել հեռավար ուսուցումն ավելի ինտերակտիվ դարձնել: Կարող է օգտագործվել ինչպես համաժամանակյա, այնպես էլ ոչ համաժամանակյա ուսուցման մեջ:

Google Jamboard-ի առավելությունները.

- Անվճար է
- Անսահմանափակ տարածք է տրամադրում
- Կարելի է կցել տարբեր ձևաչափի թվային բովանդակություն
- Շատ հեշտ է պահպանել և տարածել ստեղծված պատը
- Համատեղ համաօգտագործման հարթակ է

Ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակի առավելությունները

Կավճի փոխարեն օգտագործվում է էլեկտրոնային մարկեր, ֆլոմաստեր, մատիտ: Մաքուր են մնում ձեռքերը, հագուստը, հատակը: Տարածքն անսահմանափակ է: Կարող ենք ստեղծած պատը պահել որպես առանձին ֆայլ: Ուսումնական նյութը պատկերավոր է: Օբյեկտները կարելի է ազատորեն տեղափոխել, չափսերը փոփոխել: Միշտ հնարավորություն կա բացել նախորդ պատը և վերանայել կարևոր դրույթները: Ամրապնդում է միջառարկայական կապը՝ պատրաստի ֆայլերի օգնությամբ: Խնայում է ուսուցչի և աշակերտի ժամանակը: Մեծացնում է սովորողների ակտիվության մակարդակը: Հեշտանում է ուսուցիչների միջև փորձի փոխանակումը:

GOOGLE JAMBOARD-ի կիրառումը

Հասցեի տողում անցնել հետևյալ հղումով՝ https://jamboard.google.com : Մուտք գործել Gmail հաշիվ: Վերևի աջ անկյունում կտեսնեք 9 կետիկների բազմություն, որի վրա սեղմելով կբացվի պատուհան: Նավարկեք ներքև՝ կտեսնեք Google Jamboard սեղմակը, որի վրա սեղմելով կհայտնվեք Jamboard-ի գլխավոր էջում:





Եթե արդեն ունեք անցյալում ստեղծված պատ, այն կկարողանաք տեսնել Google Jamboard–ի գլխավոր էջում:

Google Jamboard–ի նոր էջ ստեղծելու համար անցեք ներքևի աջ անկյուն և ընտրեք «Ավելացնել» կոճակը:

Կբացվի նոր պատ, որին կարող եք տալ անուն .





Գործիքների վահանակը ունի հետևյալ տեսքը.



1.Նկարել. Այստեղ դուք ունեք տարբեր տեսակի գրիչներ, ինչպես նաև հնարավորություն ընտրելու գույնը, որոնք կարող եք օգտագործել ինտերակտիվ գրատախտակի վրա տեքստը ձեռքով գրելու համար:



2. Ռետին. Գործիք է, որով կարող եք ջնջել գրածը:

3. Ցուցիչ. Ընտրելու և ցուցադրելու գործիք է:

4. Կպչուն պիտակներ. Կարող եք ընտրել տարբեր գույների կպչուն պիտակներ գրության համար: Այնուհետև կարող եք այն տեղափոխել էջի ցանկացած հատված, փոխել չափը :

5. Նկար. Սա նկար ավելացնելու գործիքն է, որով կարող եք ավելացնել տարբեր պատկերներ: Կարող եք որոնել պատկերներ Google-ում, կարող եք վերբեռնել պատկերներ համակարգչից կամ ընտրել Google Photos թղթապանակից: Հնարավոր է նաև փոփոխել չափսերը, կրկնօրինակել և տեղափոխել:

6. Ձյեր. Կարելի է ստեղծել տարբեր երկրաչափական պատկերներ:



7. Տեքստ. Կարող եք տեղադրել տեքստ:

8.Լազեր. Գործիք, որը կարող եք օգտագործել ձեր պատի էլեմենտները ցուցադրելու համար:

9.Ֆոն. Կարող եք փոխել պատի ֆոնը:



10. Մաքուր էջ. Այս գործիքով կարող եք ստանալ մաքուր էջ, ջնջել ամբողջ գրատախտակը և սկսել նորից

11. Թերթել էջերը. Կարող եք դիտել բոլոր պատերը մեկ տեղում: Ավելացնել նոր պատեր, կրկնօրինակել կամ ջնջել: Google Jamboard-ը հնարավորություն է տալիս ստեղծել և թերթել մինչև 20 էջ:

12. Մենյու. Կարող եք վերանվանել ստեղծած էջը, արտահանել որպես PDF, պահպանել պատը որպես նկար, հեռացնել կամ պատճենել այն:

13. Մեծացնել. Մոտեցնել կամ հեռացնել էջը:

14. Հետարկել ֆ կրկնել:

Google Jamboard աշխատանքային պատի արտածումը և համատեղ կիրառումը

Google Jamboard-ի նպատակն է օգտագործել այն որպես ինտերակտիվ գործիք:

Քայլերի հետևյալ հաջորդականությամբ կարելի է այնպես անել, որ սովորողները կարողանան տեսնել ստեղծած պատը.

Настройки доступа→ изменить→для всех в интернете→сохранить


Настройки Доступа


Предоставьте доступ пользователям и группам
Добавьте пользователей или группы
Arpine Kirishyan (вы)
akirishyan@mail.ru
Владелец
Отправить отзыв в Google
Готово
Скопируйте ссылку
Редактировать могут все в Интернете, у кого есть эта ссылка.
Изменить
Копировать ссылку



Այնուհետև պետք է այնպես անել, որ սովորողները կարողանան փոփոխություններ կատարել էջում, կարողանան կատարել հանձնարարություններ: Դրա համար պետք է՝



Պետք է ընտրել Редактор -ը, որպեսզի սովորողները կարողանան խմբագրել: Կրկնօրինակել հղումը (Копировать ссылку) և ուղարկել աշակերտներին:



Բոլոր գործողությունները կատարելուց հետո սովորողները կկարողանան տեսնել պատը, ինչպես նաև կկարողանան գրել այդ էջում, եթե կան ստեղծված առաջադրանքներ ապա նաև կատարել դրանք:



Կարելի է նաև կատարել հետևյալ գործողությունները՝ սեղմելով վերին աջ անկյունում գտնվող 3 կետիկների վրա.



Որից հետո բացված պատուհանում կտեսնեք գործիքներ, որոնց միջոցով կկարողանաք՝



1. Տալ ստեղծված պատին անուն, կամ փոխել այն,

2. Ներբեռնել համակարգիչ որպես PDF ֆայլ,

3. Պահպանել որպես նկար,

4. Ամբողջությամբ ջնջել: